

ՇՈՂԱԳԱՎԱՆՔ ԵԿԵՂԵՑՈՒ ՏԱՐԱԾՔԻՑ ԳՏՆՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏՉԻ ՊԱՏԿԵՐՈՎ ԱՆՈԹԻ ՄԱՍԻՆ

1983 թ. Հայաստանի պետական Պատմության թանգարանի արշավախումբը հեղինակի ղեկավարությամբ Մարտունու շրջանի Զորագյուղ գյուղի տարածքում գտնվող Շողագավանք եկեղեցու մոտ բարձրացող «Մհերի դուռ» բլրի վրա տնտեսական հորում հայտնաբերեց ոչ մեծ կարասի մեջ 14 քրեղան: Կարասը և քրեղանների մի մասը ունեն բարձրորակ կարմիր անգրբապատ մակերես և պատկանում են հանդիսավոր խեցեղենի խմբին: Անոթների մյուս մասը ջնարակապատ են, որոնք նույնպես պատկանում են բարձր խավի սպասքին: Ինչպես կարասի, այնպես էլ քրեղանների պատմա-համեմատական ուսումնասիրության շնորհիվ պարզվում է, որ նման խեցեղեն հայտնի է Դվինի Մակարավանքի, Բերքաբերի, Գառնիի, Ամբերդի 12—13-րդ դդ. հուշարձաններից:

Քրեղանների մեջ եզակի գյուտ է Հայաստանում և Անդրկովկասում առաջին անգամ հանդիպող անոթը, որն ունի կլորավուն իրան, օղակաձև նստուկ, ուղիղ եզրեր և դուրս ճկված շուրթեր (տրամագիծը՝ 21 սմ, բարձրությունը՝ 9 սմ): Նրա արտաքին մակերեսը ծածկված է բաց կանաչավուն ջնարակով, որի վրա տեղ-տեղ հանդիպում են մուգ կետեր: Ներսից եզրագծված է երկու զույգ գծերով, որոնց միջև անցնում է կիսակլոր հատվող գծերի հարցանափշ՝ առաջացնելով յուրատեսակ շղթա: Իրանի ներսից հատակին և կենտրոնում պատկերված է երկար հագուստով մարդկային կերպարանք: Զգեստի տակից երևում են պրոֆիլով պատկերված ոտքերը: Արմունկներով ծալված ձեռքերը վեր են բարձրացված, ափերը բացված, չոված բութ մատներով: Աջ ձեռքի արմունկից կախված է վարդյակով զարդարված, զամբյուղ հիշեցնող մի իր, որը կարող է լինել խիստ ոճավորված բուրվառ, աջ արմունկի մոտ տեղադրված են զույգ վարդյակներ: Գլուխը պատկերված է ոճավորված երկար ձգված երեսով, անհավասար այտոսկրերով: Աչքերը նշաձև են, խիստ արտահայտված մուգ բիբերով և թավ հոնքերով: Հիթը սուր է, ուղիղ, թույլ արտահայտված ռունգերով: Բերանը վերին շուրթի մասում քիչ գոգավոր է, թեքված: Կզակը ծածկված է

մուգ ջնարակով արված եռանկյունաձև սուր մորուքով: Գլուխը ծածկված է դեպի վեր լայնացող վերին մասում երկու ելուստ ունեցող խույրով (գլխարկ), որի վերին մասը հարդարված է զույգ շրջանակներով: Խույրի դիմային մասում երևում են մի կողմում արված քառանկյունիներ: Ուսերը թեք են, աջը քիչ բարձրացված: Զգեստը ծածկում է ֆիգուրի արունքները, երկար թևքերը կիպ ծածկում են դաստակները: Կուրծքը հարդարված է խաչվող զույգ լանջագոտիներով: Զգեստի փեշը հարդարված է երկշար զուգահեռ, զույգ գծերով, որոնց ներքևի շարքում անցնում է շրջանակաձև հարդանախշ, վերին շարքում տեղադրված է հայալեզու «Սբ. Հանես» արձանագրությունը, որը հավանաբար «Սուրբ Հովհաննեսի» բարբառային ձևն է:

Հայաստանում գտնված ջնարակած անոթների վրա մարդկային պատկերները կազմում են ոչ մեծ, բայց բնորոշ խումբ, ըստ որում հանդիպում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց պատկերներ: Դրանց թվին է պատկանում Անիից հայտնաբերված թասը՝ հատակին կնոջ պատկերով: Նրա ձախ ձեռքը դրված է կողքին, իսկ աջ ձեռքում ըստ երևույթին բռնել է հայելին: Դեմքը ձգված է, ունի մեծ քիթ: Մատները ծածկում են գլխաշորը: Զգեստը բազմագույն է (կանաչ, դեղին): Այս թասը առաջին անգամ հրատարակել է Հ. Ա. Օրբելին, որը համարում էր այն ազգային արվեստի ինքնատիպ նմուշ (И. А. **Орбели**, Каталог Анийского Музея древностей, С.П.Б., 1910, էջ 17): Իր պատկերագրական հատկանիշներով, այս պատկերը նման է մանրանկարներում պատկերված օրինակներին, որը հնարավորություն է տվել Բ. Ա. Ծելկովնիկովին համեմատել այն Վայոց ձորում գրված 1317 թ. ձեռագրում պատկերված Գրիգորի կնոջ՝ Մամախաթունի հետ, որն ընդհանրություններ ունի Անիի թասում պատկերված կնոջ հետ (Б. А. **Келковников**, Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957. էջ 16, 17):

Կանացի պատկերներ հանդիպում են Դվինից և Արգիշտիխինիլիից գտնված թասերի վրա:

Տղամարդկանց պատկերներից հատկանշական է Դվինից գտնված ջնարակած թասը, հատակին պատկերված մեծ գլխով, կարճ մարմնով, ազդեցիկ դեմքով, տարածած թևերը բացված մատներով, գլխին թագ, ասեղնագործված հագուստով: Նման պատկերներ հանդիպում են Աղթամարի զարդաքանդակներում:

Մարդկանց պատկերները, հատկապես կանանց, հանդիպում են նաև հախճապակյա անոթների վրա: Սրանց մի մասը հիշեցնում են դիցաբանական ծովահարսներին:

Մարդկային կերպարանքների պատկերումը շատ ավելի հին ավանդույթներ ունի հայ և համաշխարհային կիրառական արվեստում: Մեր քննարկվող օրինակի նման պրոֆիլավորված ոտքեր հանդիպում են հայ միջնադարյան մանրանկարներում: Այսպես՝ Հաղպատի վանքի 1211 թ. Ավետարանում ծաղկող Մարգարեի նկարում և 14—15-րդ դդ. Տաթևի վանքում նկարագրված Ավետարանում ծաղկող Գրիգորի «Ավետում» նկարում (**Լ. Ա. Դուռնովո**, Հայկական մանրանկարչություն, Երևան, 1969, նկ. 18, 62): Նման նկար հանդիպում է նաև 14—15-րդ դարերի Ղուկասի Ավետարանում՝ պատկերված Անանուն Սյունեցու նկարում (**Ալվիդա Միրզոյան**, Գրիգոր Տաթևացի և Անանուն Սյունեցի, Երևան, 1987, էջ 67): Գլխարկի պատկերը իր ձևով հեռավոր նմանություն է գտնում 1232 Թարգմանչաց Ավետարանի «Դժոխք իջնելը» մանրանկարի կերպարներից մեկի գլխարկի հետ:

Ելնելով արձանագրությունից, մեզ թվում է, որ նկարում պատկերված է Հովհաննես Մկրտիչը, որի պատկերը հաճախ հանդիպում է նաև զարգացած միջնադարյան եկեղեցական սպասքի վրա: Այսպես, Ն. Գ. Հակոբյանի նկարագրած մի միջնադարյան մասնատուփերից մեկի դռնակի վրա պատկերված է կանգնած Հովհաննես Մկրտիչը, ուսերին թափվող երկար մազերով, մերկ սրունքներով, ոտաբոբիկ (ջրում կանգնած լինելը նշելու նպատակով), կարճ պարեգոտով, օձիքը արևելյան ձևով իրար բերած, կարճ թևքերով, ձախ ձեռքը ազդրի վրա, աջով՝ օրհնելիս (**Ն. Գ. Հակոբյան,** Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը 9—13-րդ դդ., Երևան, 1981 թ., էջ 67): Հովհաննես Մկրտչի մեկ այլ պատկեր հանդիպում է Ասորիքից և Պաղեստինից հայտնաբերված բուրվառներից մեկի վրա, ուր նա պատկերված է մկրտության դրվագում, գետի մեջ նստած Քրիստոսի գլխին ջուր լցնելիս:

Այսպիսով, Հովհաննես Մկրտչի պատկերը հիմնականում հանդիպում է հայ միջնադարյան մանրանկարներում և արարողական սպասքի վրա:

Հովհաննես Մկրտչի պատկերը մեր օրինակի վրա իր տեսակի մեջ միակն է, որ հանդիպում է խեցեղենի վրա և ուղեկցվում է արձանագրությամբ: Եզակի է նաև արձանագրության առկայությունը:

Այսպիսով, քննարկվող հավաքածուն թվագրվում է 12—13-րդ դդ. և իր լայն զուգահեռներն է գտնում Հայաստանի համաժամանակյա հուշարձաններում և, հավանաբար, պատկանել է Ծողագավանքի եկեղեցու բարձրաստիճան հոգևորականի, որն այն թաքցրել է տնտեսական հորում՝ վերահաս վտանգը նկատի ունենալով:

Հ. Ս. ԵՍԱՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու